

Յունիս 4, 1980

Ազնուափայլ
Տոբթ. Բերկրուհի Սվաճեան
Նիւ Եորք.

Սիրելի Տոբթ. Սվաճեան,

Ձեր մօր Նուարդ Նամարեանի մահուան տխուր առթիւ
Սուրբ Վարդան Մայր Տաճարի ըրած 100 --հարիւր--
տոլարի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնը շնոր-
հակալութեամբ ստացանք:

Հաճեցէք ներփակ գտնել Առաջնորդարանի թիւ 85557
ստացականը:

Կ'աղօթենք որ Տէրը լուսաւորէ հանգուցեալ մայր
Նուարդ Նամարեանի հոգին եւ ձեզի ու ձեր հարազատնե-
րուն պարգեւէ Ս. Հոգիի մխիթարութիւնը, առողջութիւն
եւ յաջողութիւն:

Աղօթարար

Խաժակ Վրդ. Պարսամեան
Լուսարարագետ